



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ՄԱՐԶԵՐՈՒՄ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ, նաև՝ Պալատ**) նախագահի թեկնածու, փաստաբան Սիմոն Բաբայանի 25.08.2021թ. դիմումը (մուտք՝ №1809-21)՝ նախընտրական քարոզարշավ իրականացնելու շրջանակում Պալատի տիրապետության տակ գտնվող մարզային տարածքներից օգտվելու մասին,

Պ ա ր գ ե ց ի՝

2021 թվականի սեպտեմբերի 12-ին հրավիրվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ «ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն» օրակարգային հարցով:

Պալատի նախագահի 12.09.2021թ. թիվ 159-Լ որոշմամբ հաստատված «ՀՀ փաստաբանների պալատի 2021 թվականի սեպտեմբերի 12-ի ընդհանուր ժողովի կազմակերպման և անցկացման գործընթացում օժանդակություն ցուցաբերելու մասին» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 4-րդ կետով սահմանվել է Պալատի մարզային տարածքներից օգտվելու կարգը և պայմանները, որի 4.1 ենթակետի համաձայն.

Պալատը հնարավորություն է ստեղծում Թեկնածուին առավելագույնը 3 (երեք) ժամով անվճար օգտվել մարզերում Պալատի տիրապետության տակ գտնվող տարածքից (**այսուհետ՝ մարզում Պալատի տարածք**)՝ հետևյալ կարգով.

- մինչև 2021թ. օգոստոսի 25-ը Թեկնածուն պետք է ներկայացնի հայտ՝ նշելով մարզի (քաղաքի) (մարզերի, քաղաքների) անվանումը, իր նախընտրած օրը և ժամը, ինչպես նաև հանդիպման ակնկալվող ողջամիտ տրամաբանությունը, որը չի կարող գերազանցել 3 (երեք) ժամը.

- Պատասխանատուն Թեկնածուներից ստացված հայտերի հիման վրա մինչև 2021թ. օգոստոսի 26-ը (ներառյալ) որոշում է մարզերում Պալատի տարածքների զբաղվածության գրաֆիկը (ըստ թեկնածուների և/կամ ըստ մարզերի) և հրապարակում է այն Պալատի կայքէջում:

Պալատի նախագահի թեկնածու, փաստաբան Սիմոն Բաբայանի կողմից 25.08.2021թ. ներկայացված հայտով հայցվել է Պալատի տիրապետության տակ գտնվող ներքոհիշյալ տարածքներից օգտվելու հնարավորություն.

**26 օգոստոսի 2021թ.
թիվ 2-Լ**

1. ք.Իջևան, 25.08.2021թ. ժամը 15:00,
2. ք.Վանաձոր, 25.08.2021թ. ժամը 18:00,
3. ք.Սևան, 25.08.2021թ. ժամը 12:00,
4. ք.Արտաշատ, 26.08.2021թ. ժամը 10:00,
5. ք.Կապան, 26.08.2021թ. ժամը 15:00,
6. ք.Արմավիր, 28.08.2021թ. ժամը 11:00,
7. ք.Գյումրի, 28.08.2021թ. ժամը 13:00:

Պալատի աշխատակազմի ղեկավարի 25.08.2021թ. թիվ 05/05/1026-2021 գրությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածու Սիմոն Բաբայանին, վերջինիս կողմից ներկայացված հայտի հիման վրա թույլատրվել է 25.08.2021թ. օգտվել Պալատի տիրապետության տակ գտնվող ստորև նշված հասցեներում տեղեկայված տարածքներից, քանի որ նույն ժամանակահատվածի համար մյուս թեկնածուների կողմից համապատասխան դիմում չի ներկայացվել:

1. ք.Իջևան, Անկախության փող. 16-19,
2. ք.Վանաձոր, Մյասնիկյան փող. 6/37,
3. ք.Սևան, Աբովյան փող. 2/2:

Պալատի նախագահի մյուս թեկնածուների կողմից մինչև 2021 թվականի օգոստոսի 25-ը ներառյալ Պալատի տիրապետության տակ գտնվող տարածքներից օգտվելու հայտ չի ներկայացվել:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Պալատի նախագահի 12.09.2021թ. թիվ 159-Լ որոշմամբ հաստատված Կարգի 4.1 ենթակետով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- **Հաստատել մարզերում ՀՀ փաստաբանների պալատի տիրապետության տակ գտնվող տարածքների զբաղվածության ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝

Գևորգ Մկրտչյան

**26 օգոստոսի 2021թ.
թիվ 2-Լ
ք.Երևան**